ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Բանալի բառեր - Պատմաճարտարապետական հուշարձան, վանական համալիր, Հաղարծին, Գոշավանք, Մակարավանք, զբոսաշրջություն, Տավուշ, զբոսաշրջիկ, մարքեթինգ, երթուղի, զբոսաշրջային ենթակառուցվածք, SWOT:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզը ՀՀ տասը մարզերից մեկն է: Տեղակայված է հանրապետության հյուսիս-արևելքում: Այն սահմանակից է Վրաստանի և Ադրբեջանի հետ: Տավուշի մարզը հնուց հայտնի է իր պատմաճարտարապետական հուշարձաններով, որոնց մի մասը բավական լավ, մյուսները՝ ոչ այդքան, ուսումնասիրված են: Մեզ հասած պատմաճարտարապետական և բնության շատ հուշարձաններ այսօր ունեն հանրահռչակման կարիք, կա նաև դրանք զբոսաշրջության ոլորտ ներառելու կարիք, տեսանելի ու հասանելի դարձնելու ոչ միայն դրանցով հետաքրքրվող մասնագետների նեղ շրջանակի համար, այլև մեր հանրության, ինչպես նաև երկիր եկող զբոսաշրջիկների համար: Լինելով 21-րդ դարի տնտեսության դինամիկ զարգացող ոլորտ՝ զբոսաշրջությունն իր հերթին հենվում է երկրի հարուստ մշակույթի վրա: Ահա թե ինչու ՀՀ-ում (տվյալ դեպքում՝ Տավուշի մարզում) պատմամշակութային հուշարձանների ներկայացումն ինքնանպատակ չէ: Սույն հոդվածում խնդիր է դրված առանձնացնելու այն հուշարձանները, որոնք արդեն իսկ ներառված են զբոսաշրջային երթուղիներում կամ, ունենալով դրա բոլոր հնարավորությունները, կարծես մոռացության են մատնվել և չեն կիրառվում որպես զբոսաշրջային ռեսուրսներ: Հոդվածի գիտական նորույթը Տավուշի մարզի զբոսաշրջային ռեսուրսների ուսումնասիրումն է, գնահատումը, ինչպես նաև մարզի զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծությունը, որը բացահայտում է մարզում զբոսաշրջության զարգացման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև առկա մարտահրավերներն ու հնարավորությունները, ինչի հիման վրա մշակվել են մի շարք առաջարկություններ: Գաղտնիք չէ նաև, որ լինելով սահմանամերձ, մարզը կարիք ունի տեղական համայնքների ուժեղացման, որը հնարավոր ենք համարում տեղացիներին զբոսաշրջային

ծառայությունների մատուցմանը մասնակից դարձնելու միջոցով: Դա կլուծի նաև մի շարք սոցիալական և զբաղվածության ոլորտի խնդիրներ:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայտնի է, որ հայկական շատ տեղանուններ ունեն էթնիկ ծագում և հաճախ կրում են հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած այս կամ այն ցեղախմբի անունը: Այդպես է նաև Տավուշի դեպքում: Առաջին անգամ պատմահայր Մովսես Խորենացին է անդրադարձել Տուհք (Տավուշ) գավառին, որը հետագայում 10-րդ դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին իրավամբ նույնականացրել է Տուս բնակավայրի հետ[1]:

Տավուշի մարզը գտնվում է ՀՀ ներկա տարածքի և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում: Հարավում և հարավ-արևելքում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի, արևմուտքում՝ Լոռու մարզերին, հյուսիսում՝ Վրաստանի Հանրապետությանը (50 կմ սահման), արևելքում և հյուսիս–արևելքում՝ Ադրբեջանի Հանրապետությանը (350 կմ սահման): Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը (ներկայում չի գործում): Հյուսիսային սահմանի երկայնքով՝ Դեբեդի ափով, անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը[2]:

Տավուշի մարզն իր մեջ ներառում է պատմական Հայաստանի 4 աշխարհների գավառներ ու գավառամասեր: Մարզի տարածքի հյուսիսային մասը (Նոյեմբերյանի տարածաշրջան) հիմնականում համապատասխանում է Գուգարքի Կողբափոր, կենտրոնական և արևմտյան մասերը (Իջևանի տարածաշրջան)՝ Կայեն և Կանգարք գավառներին: Հարավային մասը՝ (Դիլիջան) մտել է Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառի մեջ, իսկ արևելյան մասի՝ (Շամշադինի տարածաշրջան) բնակավայրերն ու հնավայրերը հիշատակվում են Ուտիք աշխարհի Փառիսոս և Արցախ աշխարհի Քուստի գավառներում: Ուտիքի մեջ է մտել մարզի տարածքի հյուսիսարևելյան՝ ավելի փոքր մասը (դա համընկել է Ուտիքի Տավուշ գավառի հետ, որի անունն էլ վերցրել է մարզը)[3]:

---

[1] **Միմոնյան Ռ.,** Տավուշի մարզ, Եր., 2012, էջ 8:

[2] www.armstat.am:

[3] Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, 2009, էջ 14-15:

Որպես մարզ ձևավորվել է 1995 թ. «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի հիման վրա[1]: Մարզի տարածքը կազմում է 2704 ք.կմ., ընդհանուր հողատարածությունը՝ 270393 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 105931.2 հա կամ ընդհանուր տարածքի 39.2%-ը: Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 9.1%-ը, բնակչության խտությունը 1ք.կմ-ի վրա կազմում է 50 մարդ: Մարզն ունի 5 քաղաքային (Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ, Այրում) և 57 գյուղական համայնք: Մարզկենտրոնն Իջևան քաղաքն է[2]: Մարզի բնակչությունը 2021 թ. սկզբի դրությամբ կազմել է 120,5 հազ. մարդ, որից 50.6 հազ. բնակվում են քաղաքներում, 69.9 հազ.՝ գյուղերում: Տղամարդիկ կազմում են բնակչության 48.9%-ը, կանայք՝ 51.1%-ը: Մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը կազմում է 53.5 հազ. մարդ, ոչ ակտիվ բնակչության թիվը՝ 35.0 հազ. մարդ: Տնտեսապես ակտիվների մեջ 49.4 հազ. զբաղվածներ են, 4.1 հազ.՝ գործազուրկ[3]:

Համեմատաբար փոքր տարածք զբաղեցնող Տավուշի մարզի տարածքում շատ են պատմամշակութային հուշարձանները, որոնցից մի քանիսը արդեն տևական ժամանակ է հանրահռչակված են և ծառայում են որպես զբոսաշրջային այցելավայրեր: Այստեղ հայտնաբերված են տարբեր ժամանակաշրջանների կիկլոպյան ամրոցներ, միջնադարյան քարանձավային բնակավայր Լաստիվերում, ինչպես նաև վաղ, միջին և ուշ միջնադարյան վանական համալիրներ, փոքրիկ մատուռներ, խաչքարեր և գերեզմանաքարեր:

Հաղարծին: Միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոն Հաղարծինի վանքը գտնվում է պատմական Զորափոր, հետագայում Կայան կոչված գավառում՝ անտառապատ լեռներով ու ձորակներով շրջապատված մի գեղատեսիլ հարթավայրում, ուր Հաղարծին գետակի երկու վտակները լեռնոտ բարձունքներից իջնող փեշերի վրա կազմում են թերակղզի, ապա վանքից փոքր-ինչ ներքև միանալով՝ խառնվում Աղստև գետին: Վանքն աղբյուրներում հանդիպում է նաև Խաղարծին[4], Հողարծին[5], Հավարծին[6], Աղարծին[7] և այլ անվանումներով: Ժո-

---

[1] ՀՀ օրենքը «Վարչատարածքային բաժանման մասին», 07.11.1995:

[2] www.tavush.mtad.am

[3] armstat.am

[4] Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին՝ **Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան**, 1977, էջ 20-61:

[5] **Ջամչյան Մ.,** Հայոց պատմություն, հ. Գ, Եր., 1984, էջ 96:

[6] **Մաթևոսյան Ա.,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Եր., 1984, էջ 560:

[7] **Աբրահամ Կրետացի,** Պատմութիւն, առաջաբանը և ծանոթագրությունները Ն. Ղորղանյանի, Եր., 1973, էջ 74:

ղովրդական ստուգաբանության համաձայն՝ «Հաղարծին» անունն առաջացել է «արծիվ» և «խաղաց» բառերից, որ նշանակել է արծիվների խաղ կամ արծիվների խաղալու վայր: Թևատարած արծվի կերպարն արտացոլվել է վանքի զարդաքանդակներում: Հաղարծինի վանական համալիրի մասին հիմնական աղբյուրը վիմագիր արձանագրություններն են, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան Հայաստանի այս նշանավոր հոգևոր ու մշակութային կենտրոնի պատմության, միաբանության, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի վերաբերյալ: Հաղարծինի մասին առաջին հիշատակությունները 12-րդ դարից են, բայց վանական համալիրը բաղկացած է 10-13-րդ դարերում կառուցված շինություններից: Հաղարծինի վանական համալիրի մեջ են մտել Սբ. Գրիգոր, Կաթողիկե, Հաղարծինի վանական դպրոցը, Սբ. Ստեփանոս, Սբ. Աստվածածին եկեղեցիները, 2 գավիթ, սեղանատունը, արքունական դամբարանը, եկեղեցականների խուցերը, աղոթատեղիներ, խաչքարեր, օժանդակ շինություններ:

Գոշավանքը միջնադարյան Հայաստանի հոգևոր, մշակութային և կրթական խոշոր կենտրոններից էր: Ըստ պատմական աղբյուրների այստեղ ուսուցանել են հայոց և օտար լեզուներ (հունարեն, լատիներեն), իրավագիտություն, պատմագիտություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ, նկարչություն: Համալիրն, ունենալով պատմաճարտարապետական և մշակութային կարևոր արժեք, համալրում է հայկական միջնադարյան ճարտարապետության գանձարանը: Գոշավանքի համալիրն առանձնանում է հարուստ և ինքնատիպ գեղարվեստական հարդարանքով, ինչպես նաև այն համալրող բարձրարժեք խաչքարերով, որոնք արվեստի գլուխգործոցներ են[1]: Մխիթար Գոշի վանահայրության օրոք այստեղ կառուցվել են **Ս. Լուսավորիչ** փայտակերտ և **Ս. Հովհաննես-Կարապետ** փոքրիկ եկեղեցիները (չեն պահպանվել), **Ս. Աստվածածին** եկեղեցին իր գավթով: Վանքի կառուցապատումը շարունակվել է մինչև 13-րդ դ. վերջը: Նոր Գետիկի ճարտարապետական համալիրի մասը կազմող հուշարձանները բաժանված են երկու խմբի: Ձորակի հյուսիսային լանջին տեղավորված է հիմնական խումբը՝ բաղկացած Ս. Աստվածածին, Ս. Լուսավորիչ, Ս. Գրիգոր եկեղեցիներից, ժամատնից, գրատուն–զանգակատնից, քաղաքացիական մի այլ շենքից, մատուռներից, պատվանդանավոր խաչքարերից: Այս խմբից հարավարևելք՝ ձորակի հանդիպակաց լանջին, իրարից փոքր-ինչ վեր տեղավորված են

[1] **Азатян Ш. Р.,** Порталы в монументальной архитектуре Армении IV-XIV вв. – Ер.: Советакан грох, 1987, с. 51.

Սբ. Հռիփսիմե երկխորան եկեղեցին և մի ավերակ շենք, որը համարվում է Մխիթար Գոշի դամբարանը:

Մակարավանքը միջնադարյան վանական համալիրը գտնվում է Տավուշի մարզի Աչաջուր գյուղից 3 կմ հարավ-արևմուտք, Պայտաթափ լեռան լանջին[1]: Գլխավոր եկեղեցին, ըստ նրանից հարավ կանգնեցված խաչքարի արձանագրության, կառուցվել է 1205 թ.: Արտաքինից ուղղանկյուն, ներսից խաչաձև, խորանի երկու կողմերում երկհարկ ավանդատներով գմբեթավոր հորինվածք ունի՝ կառուցված վարդագույն անդեզիտի սրբատաշ քարերով (հյուսիս-արևմտյան խորշը հետագայում վերակառուցվել է ավանդատան): Մակարավանքի երկրորդ՝ հնագույն եկեղեցին (X-XI դդ.) համալիրի հյուսիս-արևելքում է, կառուցված է կիսամշակ կարմրավուն տուֆի խոշոր քարերով, իսկ XIII դ. վերակառուցված ծածկը և գմբեթը՝ նույն տուֆի սրբատաշ քարերով: Մակարավանքի գավիթը (1207թ.) գրեթե քառակուսի հատակագծով, չորս սյուներով կենտրոնակազմ հորինվածք ունի, կառուցված է վարդագույն անդեզիտի սրբատաշ քարերով: Համալիրի արևելյան մասում կանգուն է Ս. Աստվածածին եկեղեցին, որը կառուցել է Մակարավանքի առաջնորդ Հովհաննեսը՝ 1198 թ.: Եկեղեցուն հյուսիսից կից է փոքրիկ, կիսավեր, թաղածածկ մատուռ: Մակարավանքի համալիրը իր զարդաքանդակների ինքնատիպությամբ, հարստությամբ և բազմազանությամբ դասվում է Ախթամարի, Բղենո Նորավանքի, Գանձասարի շարքին և կարևոր տեղ գրավում հայ ճարտարապետության մեջ:

Կապտավանքը գտնվում է Տավուշի մարզի Չինչին գյուղից հարավ-արևմուտք, անտառապատ լեռան լանջին: Այն ներքուստ խաչաձև, արտաքուստ ուղանկյուն, չորս անկյուններում ավանդատներով, գմբեթավոր հորինվածք ունի: Մուտքերը հարավից և արևմուտքից են: Կառուցված է կոպիտ տաշված ֆելզիտից: Գմբեթի թմբուկի վերին շարքի և քիվի վրա որպես զարդաքանդակ փորագրված են խաչեր: Հուշարձանը որևէ զարդարանք չունի: Արտաքին տեսքին բազմազանություն է տալիս միայն գմբեթի վեղարի տակի քիվը և դրանից ցած թմբուկի քարերի վերին շարքը, որոնք սրբատաշ վարդագույն տուֆից են: Պատերի վերջին վերանորոգությունը կատարված է ավելի մանր քարերով, առանց քարաշարքերի հորիզոնական գծերը պահպանելու[2]: Ներկայումս հուշարձանը կանգուն է, քանդված են արևմտյան և հարավային խաչթևերի թաղերը և թափված են տանիքի և վեղարի երեսպատ սալերը, ինչպես և պատերի վերին շարքերը: Չինչին գյուղի շրջակայքում պահպանվել են խաչքարեր (XIII-XVII

---

[1] **Մելիք-Բախշյան Ս.,** Հայոց պաշտամունքային վայրեր, Եր., 2009, 278:

[2] **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, 1-ին հատոր, Եր., 1942, էջ 206:

դդ.), գյուղատեղիներ, եկեղեցիներ, գերեզմանոցներ (XIII-XVI դդ.), քարայրեր, ամրոց:

Ջուխտակ վանքը գտնվում է Դիլիջանից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ Դիլիջան-Վանաձոր ճանապարհի աջ կողմում՝ անտառապատ բլրի լանջին: Վանքը բաղկացած է երկու առանձին եկեղեցիներից՝ Սուրբ Աստվածածին և Սուրբ Գրիգոր, և շուրջը տարածված գերեզմանոցից: Ջուխտակ վանքը հիմնադրվել է 11-12 դարերում: Ջուխտակ վանք անվանումը ժողովրդական է («Ջուխտ» նշանակում է զույգ): Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 11-րդ դարում: Այն կենտրոնագմբեթ, որմնամույթերի վրա հենվող 4 կամարով, սրբատաշ քարերով, միջին մեծության (9,7X7,5 մ) շինություն է: Գտնվում է Աստվածածին եկեղեցուց 15 մ արևելք: Սուրբ Աստվածածինը ճարտարապետ Սարգսի մտահղացմամբ կառուցվել է 1201 թ. վանքի առաջնորդ Հայրապետի նախաձեռնությամբ[1]: Այն դեղնավուն, բազմերանգ ֆելզիտի սրբատաշ քարերով շինված քառանկյունի հատակագծով, միանավ բազիլիկի տիպի թաղակապ, երկթեք տանիքով շինություն է(8,6X6,4 մ): Եկեղեցիների վրա կան քանդակներ, վիմագրեր, որոնցից մեկը գտնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցու կիսակլոր ճակատակալ քարի վրա: Հիշատակվում են նաև Պետրոսի վանք և Գիշերավանք անվանումները: Վանքի տարածքում նշմարվում են օժանդակ շինությունների հետքեր: Երկու եկեղեցիների շուրջ տարածված է միջնադարյան գերեզմանոցը իր յուրահատուկ տապանաքարերով:

Բնականաբար, Տավուշի մարզի բոլոր պատմաճարտարապետական հուշարձաններին անհնար է անդրադառնալ մեկ հոդվածի շրջանակներում, ուստի այժմ փորձենք ներկայացնել դրանց և մի շարք այլ հուշարձանների ներառվածության խնդիրը զբոսաշրջային երթուղիներում:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տավուշի մարզը հարուստ է էկոզբոսաշրջության կազմակերպման ռեսուրսներով: Մարզի տարածքում գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներն են.

• Դիլիջան ազգային պարկը, որը ստեղծվել է 2002թ. կաղնու և հաճարենու ռելիկտային անտառների, հատապտղային կենու եզակի պուրակի, բնական սոճուտների, հանքային աղբյուրների սնման մակերեսնե-

[1] **Էլլարյան Ի.,** Աղստևի հովտի պատմության և մշակույթի հուշարձանները, Եր.,1980, էջ 54-56:

րի, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված կենդանիների ու բույսերի պահպանության նպատակով, տարածքը կազմում է 33765.0 հեկտար,

• Ախնաբադի կենու արգելավայրը, որը ստեղծվել է 1958թ. ռելիկտային Կենի հատապտղային տեսակի պահպանության նպատակով, տարածքը 25.0 հեկտար է,

• Արջատխլենու արգելավայրը, որը ստեղծվել է 1958թ. ռելիկտային արջատխլենու և կենու պուրակների պահպանության նպատակով, տարածքը 40.0 հեկտար է,

• Գանձաքարի արգելավայրը, որը ստեղծվել է 1971 թ., լեռնային անտառների, հազվագյուտ և արժեքավոր կենդանիների (այծյամ, գորշ արջ, Կովկասյան մարեհավ) պահպանության նպատակով, տարածքը 6813.0 հեկտար է,

• Իջևանի արգելավայրը, որը ստեղծվել է 1971 թ., անտառային լանդշաֆտների ու դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանության նպատակով, տարածքը 5908.0 հեկտար է,

• Զիկատարի արգելավայրը, որը ստեղծվել է 2010թ., անտառային էկոհամակարգերի պահպանության նպատակով, տարածքը 150.0 հեկտար է[1]:

Դիլիջան ազգային պարկում մշակվել են էկոերթուղիներ՝ Դիլիջան--Մաթոսավանք, Դիլիջան-Ջուխտակ վանք-Մատուռ, Դիլիջան (Շամախյան) – Հաղարծին վանք, Պարզ լիճ – Գոշավանք, Դիլիջան – Թթու ջուր – Պարզ լիճ, Աղավնավանք - Կենու պուրակ, Հաղարծին գյուղ – Աբեղաքար, Դիլիջան – Այրիդաշտ, Գոշավանք – Գոշ (Տզրկա) լիճ, Դիլիջան ԱՊ ՊՈԱԿ – Ջրվեժ, ք. Դիլիջան – Դիլիջանի լեռնաշղթա, հեծանվային երթուղի:

Զիկատար բնապահպանական կենտրոնում մշակված էկոերթուղիներն են՝ Մշկավանքի տարածք, Զիկատար արգելավայր, Կենու պուրակ, Խեչքար տեղամաս[2]:

Տավուշում կա երկու դենդրոպարկ՝ Իջևանի դենդրոպարկը և Բերդի Սորաններ դենդրոպարկը: Մարզում կա նաև թվով 16 բնության հուշարձան[3]:

Տավուշի մարզն ունի նաև առողջարանային զբոսաշրջության կազմակերպման ներուժ: Մարզում Դիլիջանի լեռնակլիմայական, հանքաջրաբուժական կուրորտի հիմնական բուժիչ գործոններն են՝ լեռնային շղթայի բարենպաստ լեռնաանտառային կլիմայական պայմանները և

---

[1] ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշում:

[2] Էկոտուրիստական ուղեցույց, 2018, էջ 38-60:

[3] ՀՀՊՏ 2008.09.10/56(646) Հոդ.930:

սառը, ածխաթթվային և բուժիչ հանքային ջրերը: Այստեղ գործում է Լեռնային Հայաստան առողջարանը[1]:

ՀՀ-ում կա 24221 պատմամշակութային հուշարձան, որից 2005-ը Տավուշի մարզում են[2]: Տավուշում կա 291 կրոնական կառույց, որից 155-ը՝ եկեղեցի, 85-ը՝ մատուռ[3] :

ՀՀ Տավուշի մարզում գործում է պետական ԲՈՒՀ-երի 2 մասնաճյուղ՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղը: 2014թ. սեպտեմբերից գործում է Դիլիջանի միջազգային դպրոցը:

Տավուշի մարզում կազմակերպվում են նաև փառատոններ (Ենոքավանում՝ ՀայԲույս և Յելլ էքստրիմ, Դիլիջանում՝ Արվեստների և արհեստների փառատոնը, Դիլիտոնը, Բերդում՝ Մեղրի և հատապտղի, Իջևանում՝ Հայկական էքստրիմ փառատոն)[4] :

Տավուշի մարզում գտնվող Ենոքավան գյուղում «Յել էքստրիմ պարկն» առաջարկում է զիփլայն էքստրեմալ մարզաձևը և այլ ծառայություններ:

Տավուշի մարզն ունի համեղ ազգային խոհանոց, ինչը պետք է ընդգրկել զբոսաշրջային երթուղիներում: Մարզի հայտնի ավանդական կերակրատեսակներից են՝ Տավուշի բորանին, քաշիկան (հարիսայի տարատեսակ), սալին (թխվածքի տեսակ)[5]:

Տավուշի մարզի զբոսաշրջային ակտիվները կարող են նպաստել զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացմանը՝ կրոնական, պատմամշակութային, կրթական, ագրո և էկո, գաստրոնոմիական, սպորտային, արկածային, փառատոնային, առողջարանային, գործարար և այլն: Տավուշում հիմնական այցելության վայրեր կարող են լինել՝ Դիլիջանը, Իջևանը, Բերդը, Դիլիջան ազգային պարկը, Պարզ լիճը, Գոշավանքը, Հաղարծինը, Ենոքավանը, Մակարավանքը, Կիրանց վանքը, Ջուխտակ վանքը, Մաթոսավանքը, Իջևանի անտառները, Աղստև գետը և այլն:

Տավուշի մարզի հարուստ զբոսաշրջային ռեսուրսների ճիշտ օգտագործումը կնպաստի մարզում զբոսաշրջության զարգացմանը:

---

[1] Атлас - климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении / Под гл. ред. Б. Арутюняна. Ереван, 2010, с. 124-133.

[2] ՀՀ սոցիալական վիճակը, 2020, էջ 596, https://armstat.am/file/article/soc_vich_2020_26.pdf:

[3] Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տվյալներ:

[4] Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ 2017-2025, Հավելված N 10 ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման:

[5] Թովմասյան Գ., Գաստրոզբոսաշրջության զարգացման հեռանկարները ՀՀ-ում, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2019, 3, էջ 148-158:

Զբոսաշրջային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տեսանկյունից անհրաժեշտ է անդրադառնալ նաև մարզի սոցիալ-տնտեսական վիճակին:

2020 թ. Տավուշի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել է՝ արդյունաբերություն՝ 1.5%, գյուղատնտեսություն՝ 4.3%, շինարարություն՝ 3.0%, մանրածախ առևտուր՝ 2.3%, ծառայություններ՝ 0.9%[1]:

Տավուշի մարզի ՀՆԱ-ն 2019թ. շուկայական գներով կազմել է 133907.9 մլն դրամ (ՀՀ-ի 2.04%-ը)[2], գործազրկության մակարդակը 2020 թ. կազմել է 23.6% (ՀՀ գործազրկության մակարդակը՝ 18.2%), աշխատուժի թվաքանակը՝ 56.6 հազար մարդ, զբաղվածները՝ 43.3 հազար մարդ, գործազուրկները՝ 4.3 հազար մարդ, միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 122894 դրամ [3]:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2019 թ. ՀՀ է ժամանել 1894377 զբոսաշրջիկ, իսկ ՀՀ-ից մեկնել է 1867888 զբոսաշրջիկ[4]: 2020 թ. համավարակի պայմաններում ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը նվազեց 81 տոկոսով՝ կազմելով 360338 մարդ: ***2021 թ.***, ոլորտը սկսեց աստիճանաբար վերականգնվել, և ***ներգնա զբոսաշրջիկների թիվը կազմել է 870308 մարդ***՝ 2020 թ. համեմատ աճելով 2,4 անգամ[5]:

2019թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 1544600 մարդ, որոնց մեջ գերակշիռ մաս են կազմում հանգստի և ժամանցի նպատակով ճամփորդող զբոսաշրջիկները[6] : ***2020 թ. անկում ապրեց նաև ներքին զբոսաշրջիկների թվաքանակը՝ կազմելով 1045756, իսկ 2021 թ. կրկին ոլորտն աշխուժացավ՝ կազմելով 1595826 մարդ***[7], ինչն ավելին է, քան 2019 թ. գրանցված ցուցանիշը: Համավարակի պայմաններում միջազգային տեղաշարժի սահմանափակումները հաշվի առնելով՝ ներքին զբոսաշրջության աճը բնական էր:

---

[1] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով՝ Տավուշի մարզ, 2021, https://armstat.am/file/article/marzer_2021_35.pdf

[2] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով՝ 2021, էջ 29:

[3] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով՝ 2021, էջ 116-142:

[4] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար դեկտեմբերին, էջ 139:

[5] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվար դեկտեմբերին, էջ 141:

[6] **Մկրտչյան Ա., Թովմասյան Գ.,** Ներքին զբոսաշրջության զարգացման հեռանկարները ՀՀ-ում, 2021, 1, էջ՝ 59-72, https://www.eiu.am/wp-content/uploads/2021/08/banber-2021-01.pdf

[7] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ. հունվարին, https://armstat.am/file/article/sv_01_22a_422.pdf, էջ 114:

Պետք է նշել, սակայն, որ ***չկա պաշտոնական վիճակագրություն, թե որքան են կազմել ներգնա և ներքին զբոսաշրջային այցելություններն ըստ ՀՀ մարզերի:***

Տավուշի մարզի ծառայությունների ծավալը ՀՀ ծառայությունների ծավալի ընդհանուր կառուցվածքում կազմում է 0,94%: Տավուշում կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը 2020 թ. կազմել է ՀՀ ծառայությունների ընդհանուր ծավալի 1,94%-ը, մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների ծավալը՝ ընդհանուրի 0,005%-ը:

Աղյուսակ 1. Ծառայությունների ծավալը Տավուշի մարզում, մլն դրամ[1]

	2017	2018	2019	2020
Ծառայությունների ծավալը, ընդամենը				
ՀՀ	1434321.2	1725840.2	1993439.3	1721735.5
Տավուշ	14111.0	16346.1	20436.0	16137.2
Կացության և հանրային սննդի կազմակերպում				
ՀՀ	112035.6	150901.7	194257.4	114333.8
Տավուշ	1973.6	2563.6	3900.6	2218.2
Մշակույթ, զվարճություններ, հանգիստ				
ՀՀ	249766.3	338451.6	420755.7	339450.8
Տավուշ	106.7	144.6	232.2	174.7

ՀՀ-ում վերջին տարիներին աճում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) և հանրային սննդի օբյեկտների թվաքանակը: 2020 թ. ՀՀ-ում եղել է 847 ՀՏՕ, որից Երևանում՝ 480, Տավուշում՝ 76[2]: 2020 թ. ՀՀ-ում եղել է 2321 հանրային սննդի կազմակերպման օբյեկտ, որից 1599-ը՝ Երևանում, 115-ը՝ Տավուշի մարզում: Զբոսաշրջային գործակալությունների թիվը ՀՀ-ում 2020 թ. կազմել է 691, որից 588-ը՝ Երևանում, 6-ը՝ Տավուշի մարզում: Զբոսաշրջային ենթակառուցվածքների առումով Տավուշի մարզն առաջատար է, ՀՏՕ-ների թվաքանակով զիջում է Կոտայքին, հանրային սննդի օբյեկտների քանակով՝ Կոտայքի և Արարատի մարզերին:

ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարությամբ սահմանված է մարզի զարգացման տեսլականը, ըստ որի 2025թ. ՀՀ Տավուշի մարզը կլինի մրցունակ արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ ու զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքներ ունեցող մարզ: Մարզը բոլոր տարածքներում կապահովի համաչափություն և կա-

[1] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021, էջ 88-89:

[2] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021, էջ 291:

յունություն: Մարզի ռազմավարական գերակայություններից է կայուն զբոսաշրջության զարգացումը: Ռազմավարությամբ գերակա խնդիր է սահմանված զբոսաշրջության բոլոր տեսակների զարգացումը: Ըստ ռազմավարության՝ մարզի և, հատկապես, Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ), պատմական և բնական հուշարձանների առկայությունը չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման, միջազգային և ներքին զբոսաշրջության զարգացման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է բարելավել ենթակառուցվածները, իրականացնել աշխատակիցների վերապատրաստումներ, ստեղծել ինֆորմացիոն տեղեկատվական կենտրոններ, թողարկել բուկլետներ, կազմակերպել մարկետինգային արշավներ: Այս ամենի նպատակն է բարձրացնել զբոսաշրջիկների հետաքրքրությունը: Ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է մարզի հանգստի գոտիներում խթանել զբոսաշրջությունը, մասնավորապես էկոտուրիզմի, ագրոտուրիզմի, էքստրեմալ, առողջարանային և ձմեռային տուրիզմի զարգացումը[1]:

Տավուշի մարզի համար մշակվել է զբոսաշրջության զարգացման հայեցակարգ 2019-2024 թվականների համար, որում որպես տեսլական սահմանվել է, որ զբոսաշրջությունը Տավուշի մարզում պետք է դառնա տեխնոլոգիական, ամբողջական, վերարտադրողական, ուսուցողական և շարունակական, իսկ Տավուշի մարզը զբոսաշրջության տեսանկյունից պետք է լինի տեղական, տարածաշրջանային և համաշխարհային նշանակության կայուն զբոսաշրջային դեստինացիա: Հայեցակարգի առաքելությունն է՝ աջակցել Տավուշի մարզում զբոսաշրջային գործունեության մեջ ներգրավված շահագրգիռ տեղական/մարզային կողմերին՝ իրենց գործունեության զարգացումն իրականացնել կայուն զբոսաշրջության սկզբունքների շրջանակներում: Հայեցակարգի նպատակն է՝ ստեղծել գաղափարական և մոտեցումների ընդհանուր հիմք մարզի զբոսաշրջության ոլորտի զարգացման համար որոշումներ կայացնող կողմերի (տեղական, ազգային, միջազգային) գործողություններն ուղղորդելու նպատակով: Հայեցակարգի խնդիրներն են՝ նպաստել զբոսաշրջության ոլորտում որոշումների կայացման արդյունավետության բարձրացմանը, բարձրացնել մարզի միջազգային և ներքին զբոսաշրջային իմիջը, խթանել մարզում

[1] ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն, Հավելված N 10 ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման:

զբոսաշրջային մշակույթի զարգացմանը, խթանել նորարարական գաղափարների ստեղծմանը և զարգացմանը[1] :

Տարբեր զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպվող զբոսաշրջային տուրերը ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ Տավուշի մարզի զբոսաշրջային գրավչություններից գործող տուրերում ընդգրկված են հետևյալ վայրերը.

- Դիլիջան, Հաղարծին, Պարզ լիճ, Գոշավանք (Արշավներ ակումբ)[2],
- Մակարավանք, Հին Դիլիջան, Գոշավանք (Wings tour)[3],
- Ծովիզ, Իջևանի դենդրոպարկ, Մակարավանք (Positive day tour)[4],
- Աղջկա բերդ[5],
- Կապտավանք, Կածարեթի բերդ, Տավուշի ջրամբար[6],
- Հաղարծին, Սրվեղ, Ծովիզի վանք, Մակարավանք, Տուր դեպի Դիլիջան և Իջևան, Իջևանի դենդրոպարկ[7]:

Մարզի զբոսաշրջային գրավչություններ ներկայացնող կայքը պատրաստվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ/ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության ցուցաբերած աջակցության, ինչպես նաև գործընկեր Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան, Կողբ, Այրում համայնքների համաֆինանսավորման շնորհիվ [8]:

Տավուշի մարզում կարող են կազմակերպվել հետևյալ երթուղիները.

- ✓ Դիլիջան – Պարզ լիճ - Գոշավանք – Հաղարծին,
- ✓ Դիլիջան ազգային պարկ,
- ✓ Դիլիջան - Գոշ - Աղավնավանք - Խաչարձան – Ճերմակավան - Գեղատափ,
- ✓ Իջևան – Լուսահովիտ – Այգեհովիտ – Վազաշեն,

---

[1] Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ 2019-2024 թթ., Հավելված, հաստատված ՀՀ Տավուշի մարզպետի 2019 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 132-Ա որոշման:

[2] Արշավներ ակումբ, https://www.facebook.com/arshavnerakumbtour/photos/27605240107606 87

[3] Wings tour, https://www.facebook.com/wingstour.am/photos/pcb.2787346518225556/27873 44424892432

[4] Positive day tour, https://www.facebook.com/positivedaytour/photos/1548993492169226

[5] Աղջկա բերդ, https://onewaytour.com/hy/sights-of-armenia/aghjka-berd/

[6] Բացառիկ տուր դեպի Կապտավանք, Կածարեթի բերդ, Տավուշի ջրամբար, https://one waytour.com/hy/regular-daily-tours/bacarik-tur-depi-kaptavank-kacareti-berd-tavushi-jrambar/

[7] Տուրեր, https://visit-tavush.com/hy/turer/

[8] Տավուշի զբոսաշրջային կայքէջ, https://visit-tavush.com/hy/filter-home/

- ✓ Բերդ – Ծաղկավան – Վարագավան,
- ✓ Բերդ – Վերին Կարմիրաղբյուր – Արծվաբերդ,
- ✓ Իջևան – Ենոքավան – Մակարավանք,
- ✓ Սնքար – Ոսկեպար – Նոյեմբերյան – Կողբ,
- ✓ Տավուշի ջրամբար – Չորաթան – Չինարի – Այգեձոր – Խնձորուտի ջրամբար[1]:

Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների վերլուծության նպատակով հարկ է իրականացնել SWOT վերլուծություն, ինչը թույլ կտա մատնանշել զբոսաշրջության զարգացման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:

Աղյուսակ 2. Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**	**Հնարավորություններ**	**Սպառնալիքներ**
Պատմամշակութային հարուստ ժառանգություն	Զբոսաշրջային տուրերում ընդգրկված են քիչ թվով վայրեր	Զբոսաշրջային տուրերում տարբեր վայրերի ընդգրկում	Ներմարզային ճանապարհների ոչ բարվոք վիճակ
Կրոնական կառույցների առկայություն	Վիճակագրության բացակայություն	Մարքեթինգային միջոցառումների շնորհիվ զբոսաշրջիկների թվաքանակի աճ	Գյուղական բնակչության աղքատություն
Էկո և ագրոզբոսաշրջային ակտիվներ	Թերի մարքեթինգ	Դրամաշնորհների ներգրավում զբոսաշրջային նպատակներով	Արտագաղթ
Ազգային խոհանոց	Մարզում ՀՏՕ-ների քիչ թիվ	Գյուղերում ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորություն	Որոշ գյուղերում խմելու ջրի սակավություն
Գյուղական կենցաղ և հյուրընկալ	Մարզում հանրային սննդի օբյեկտների քիչ	Փառատոնների ընդլայնում	Ենթակառուցվածքների թերզարգացվածութ-

[1] **Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Վ. Վ., Թովմասյան Գ.Ռ.,** Հայաստանի Հանրապետության մարզերի զբոսաշրջային երթուղիները: Կոլեկտիվ մենագրություն: Եր.: Հեղ. հրատ., 2021, էջ 239-267:

վերաբերմունք	թիվ		յուն
Սպորտային և արկածային զբոսաշրջային ակտիվներ (լեռներ, ձորեր, կիրճեր, զիփ լայն, և այլն)	Զբոսաշրջային տեղեկատվության պակաս	Առկա ռեսուրսների հիման վրա զբոսաշրջային նոր երթուղիների մշակում	Շրջակա միջավայրի պահպանման խնդիրներ, աղտոտում, ծառահատումներ
Դիլիջանի առողջարանային զոտի (հանքային ջրեր, բարենպաստ կլիմա)	Զբոսաշրջային ցուցանակների ոչ բավարար քանակ/ բացակայություն	Զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացում (կրթական, գործարար, արկածային, պատմամշակութային և այլն)	Սահմանամերձ մարզ (սահմանամերձ համայնքներում կրակոցներ Ադրբեջանի կողմից)
Տարանցիկ տրանսպորտա-աշխարհագրական դիրք և Վրաստանի հետ միջպետական սահմանի առկայություն	Մարզում միջհամայնքային տրանսպորտի պակաս/ բացակայություն	Զբոսաշրջային ենթակառուցվածքի օբյեկտների ավելացում	Սեզոնայնություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, Տավուշի մարզն իր հարուստ պատմամշակութային հուշարձանների, հիանալի բնության, համեմատաբար զարգացած ենթակառուցվածքների շնորհիվ, կարելի է ասել, համարվում է զբոսաշրջային հիմնական կենտրոններից մեկը ՀՀ-ում: Զբոսաշրջությունն ունի զարգացման էական նախադրյալներ Տավուշի մարզում: SWOT վերլուծության արդյունքում կարելի է մատնանշել այն հիմնական քայլերը, որոնք կնպաստեն մարզում զբոսաշրջության զարգացմանը.

- առկա զբոսաշրջային ռեսուրսների հիման վրա մշակել նոր երթուղիներ՝ ավելի շատ վայրեր ներառելով երթուղիներում, ինչը կնպաստի նաև տարբեր համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը,
- բարելավել ոլորտի վիճակագրական հաշվառումը,
- իրականացնել մարքեթինգային գործողություններ՝ այդ թվում նաև սոցիալական ցանցերի ընդգրկմամբ՝ մարզի զբոսաշրջային գրավչությունը պոտենցիալ զբոսաշրջիկներին (այդ թվում՝ միջազգային) ներկայացնելու համար,
- ընդլայնել զբոսաշրջային տեղեկատվությունը բոլոր հնարավոր հարթակներում, ինչպես նաև մարզում զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակների ավելացման միջոցով,
- բարելավել ենթակառուցվածքները, վերանորոգել ճանապարհները՝ հատկապես գյուղական, բարելավել միջհամայնքային տրանսպորտը, ավելացնել զբոսաշրջային ցուցանակները,
- իրականացնել ագրոզբոսաշրջության զարգացման ծրագիր՝ ներառելով մարզի տարբեր գյուղեր և այնտեղ զբոսաշրջիկների համար համապատասխան ագրոզբոսաշրջային ծառայություններ (մասնակցություն հողագործական աշխատանքներին, մրգերի բերքահավաք, ազգային ուտելիքների պատրաստում, լավաշի և բոքոնի թխում, անասնապահական աշխատանքներ, և այլն) և գյուղական միջավայրում հանգիստը կազմակերպելով: Ագրոզբոսաշրջության զարգացման նպատակով հարկ է նաև բնակիչների և հյուրընկալողների շրջանում կազմակերպել հատուկ դասընթացներ՝ հյուրերի ընդունման և սպասարկման վերաբերյալ, համագործակցել զբոսաշրջային գործակալությունների հետ՝ համապատասխան զբոսաշրջային արդյունքի ստեղծման և գովազդման նպատակով,
- ավելացնել զբոսաշրջային ենթակառուցվածքի օբյեկտները մարզում,
- հաշվի առնելով մարզի զբոսաշրջային ռեսուրսները՝ կազմակերպել տարբեր փառատոններ:

Անշուշտ, զբոսաշրջության զարգացումը կնպաստի ենթակառուցվածքների զարգացմանը, ներդրումների ներգրավմանը, մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, եկամտի ապահովմանը, ինչպես նաև ազգային, հոգևոր-մշակութային արժեքների պահպանմանն ու արժևորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, առաջաբանը և ծանոթագրությունները Ն. Ղորղանյանի, Երևան, 1973, 314 էջ:
2. Աղջկա բերդ, https://onewaytour.com/hy/sights-of-armenia/aghjka-berd/
3. Արշավներ ակումբ, https://www.facebook.com/arshavnerakumbtour/ photos/2760524010760687
4. Ավետիսյան Ս. Ս., Գրիգորյան Վ. Վ., Թովմասյան Գ.Ռ., Հայաստանի Հանրապետության մարզերի զբոսաշրջային երթուղիները: Կոլեկտիվ մենագրություն: Եր.: Հեղ. հրատ., 2021, 305 էջ:
5. Բացառիկ տուր դեպի Կապտավանք, Կածարեթի բերդ, Տավուշի ջրամբար, https://onewaytour.com/hy/regular-daily-tours/bacarik-tur-depi-kaptavank-kacareti-berd-tavushi-jrambar/
6. Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Երևան, 1977, 330 էջ:
7. Էլլարյան Ի., Աղստևի հովտի պատմության և մշակույթի հուշարձանները, Եր., 1980, 154 էջ :
8. Էկոտուրիստական ուղեցույց, ՀՀ Բնապահպանության նախարարություն, Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն, Երևան, 2018, 60 էջ:
9. Թովմասյան Գ., Գաստրոզբոսաշրջության զարգացման հեռանկարները ՀՀ-ում, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2019, 3, էջ 148-158:
10. Թորամանյան Թ., Հայկական ճարտարապետություն, 1-ին հատոր, Երևան, 1942, 298 էջ:
11. Ծառայություններ, https://yellextremepark.com/hy/services (վերջին մուտքը՝ 20.05.2020)
12. ՀՀ օրենքը «Վարչատարածքային բաժանման մասին», 07.11.1995:
13. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ 2019-2024, հաստատված Տավուշի մարզպետի 2019թ. հոկտեմբերի 3-ի թիվ 132-Ա որոշմամբ, http://tavush.mtad.am /files/docs/45077.pdf
14. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, https://armstat.am/file/article/marzer_2021_9.pdf, https://armstat.am/file/article/marzer_2021_22.pdf
15. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Տավուշի մարզ, 2021, https://armstat.am/file/article/marzer_2021_35.pdf

16.Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Ազգային հաշիվներ,
https://armstat.am/file/article/marzer_2021_10.pdf

17.Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Աշխատանքի շուկա,
https://armstat.am/file/article/marzer_2021_17.pdf

18.Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Առևտուր և այլ ծառայություններ,
https://armstat.am/file/article/marzer_2021_15.pdf

19. ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշումը Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166&fbclid=IwAR0f53ZlPVB1H-dD778KWYVPOB9gkHMPWfIzAYrEh_RCKct51pJ4VyeN fio

20. ՀՀՊՏ 2008.09.10/56(646) Հոդ.930, ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին, 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն,
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83313

21. ՀՀ սոցիալական վիճակը 2020թ.,
https://armstat.am/file/article/soc_vich_2020_26.pdf

22. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար դեկտեմբերին,
https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf

23.ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվար դեկտեմբերին,
https://armstat.am/file/article/sv_12_21a_421.pdf

24. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ. հունվարին,
https://armstat.am/file/article/sv_01_22a_422.pdf

25. ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն, Հավելված N 10 ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման

26.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ 2019-2024, Հավելված, հաստատված ՀՀ Տավուշի մարզպետի 2019 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 132-Ա որոշման:

27. Մաթևոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, 987 էջ:

28. Մելիք-Բախշյան Ս., Հայոց պաշտամունքային վայրեր, Եր., 2009, 432 էջ:

29. Մկրտչյան Ա., Թովմասյան Գ., Ներքին զբոսաշրջության զարգացման հեռանկարները ՀՀ-ում, 2021, 1, էջ՝ 59-72, https://www.eiu.am/wp-content/uploads/2021/08/banber-2021-01.pdf
30. Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, 755 էջ:
31. Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տվյալներ:
32. Սիմոնյան Ռ., Տավուշի մարզ, Եր., 2012, 284 էջ:
33. Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր,Եր., 2009, 290 էջ:
34. Տավուշի զբոսաշրջային կայքէջ, https://visit-tavush.com/hy/filter-home/
35. Տուրեր, https://visit-tavush.com/hy/turer/
36. Азатян Ш.Р. Порталы в монументальной архитектуре Армении IV-XIV вв. – Ер.: Советакан грох, 1987, 248 с.
37. Атлас - климат и природные лечебно-оздоровительные ресурсы Армении / Под гл. ред. Б. Арутюняна. Ереван, 2010, с.124–133.
38. One way tour, https://www.facebook.com/onewaytour/photos/pcb.5064028623657965/5064035813657246
39. Positive day tour, https://www.facebook.com/positivedaytour/photos/1548993492169226
40. Wings tour, https://www.facebook.com/wingstour.am/photos/pcb.2787346518225556/2787344424892432
41. www.tavush.mtad.am

Марине Геворкян, Гайане Товмасян, Туристические ресурсы тавушской области ра и анализ возможностей развития туризма - Тавушская область расположена на северо-востоке республики, граничит с Грузией и Азербайджаном. Регион имеет богатые туристические ресурсы, на основе которых можно организовать ряд маршрутов. В статье рассматриваются основные туристские ресурсы региона - исторические, культурные, экологические, гастрономические и др., существующие и возможные маршруты. Были представлены основные социально-экономические показатели региона, инфраструктура туризма. В Тавушской области имеется 76 гостиничных объектов, 115 объектов общественного питания, 6 турагентств.

Туристический актив Тавушской области может способствовать развитию различных видов туризма: религиозного, историко-культурного,

познавательного, агро, эко, гастрономического, спортивного, приключенческого, фестивального, курортного, делового и др. Основными местами посещения в Тавуше могут быть: Дилижан, Иджеван, Берд, Дилижанский национальный парк, озеро Парз, Гошаванк, Агарцин, Енокаван, Макараванк, монастырь Киранц, монастырь Джухтак, Матосаванк, Иджеванские леса, река Агстев.

В целях комплексного анализа туристических проблем региона был проведен SWOT-анализ, в результате которого выработаны предложения по совершенствованию инфраструктуры, расширению маркетинговой деятельности, внедрению статистического учета, разработке программ развития туризма, проведению фестивалей, разработка новых туристических маршрутов.

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan,Tourism resources of tavush region of the ra and analysis of tourism development opportunities - Tavush region is located in the north-east of the RA, bordering with Georgia and Azerbaijan. The region has rich tourism resources, on the basis of which a number of routes can be organized. The article presents the main tourist resources of the region - historical, cultural, ecological, gastronomic, etc., existing and possible routes. The main socio-economic indicators of the region, tourism infrastructure were presented. There are 76 hotel facilities, 115 catering facilities, 6 travel agencies in Tavush region.

The tourism assets of the Tavush region can contribute to the development of various types of tourism: religious, historical and cultural, educational, agro, eco, gastronomic, sports, adventure, festival, resort, business, etc. The main places to visit in Tavush can be: Dilijan, Ijevan, Berd, Dilijan National Park, Parz Lake, Goshavank, Haghartsin, Yenokavan, Makaravank, Kirants Monastery, Jukhtak Monastery, Matosavank, Ijevan Forests, Aghstev River.

In order to comprehensively analyze the tourism problems of the region, a SWOT analysis was carried out, as a result of which proposals were developed to improve infrastructure, expand marketing activities, introduce statistical accounting, develop tourism development programs, hold festivals, and develop new tourist routes.

Ուղարկվել է խմբագրություն 12.09.2022թ.
Գրախոսվել է 15.09.2022թ.
Ստորագրվել է տպագրության 17.09.2022թ.